

վարդապետին, և որովհետև այն օրերին վախճանուած էր Երուսաղէմայ պատրիարք Գրիգոր շղթայակիր, (թէև տեղւոյն միաբանք նորա Թորոս աշակերտին էին ընտրել պատրիարք), Կ. Պօլսեցիք Յակովբ Նալեանին ընտրեցին և ուղարկեցին Երուսաղէմ։

(Եւրո-նալէի) Ե. Վ. Մ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԵՐԸ ԱՍԻԱՑՈՒՄ.

Հայերի բարոյական ինքնագոյութիւնը, Որսիսի եղանակաւ Հայերը պահպանեցին իւրեանց բարոյական ինքնագոյութիւնը, — Հայերի ընդարձակ կտակերը Ասիական ժողովուրդների հետ ընդարձակեցին նրանց պատմութեան սահմանը.

« Մենք շրջումներ տէրութիւնների և ազգերի աճիւնի մէջ, » ասաց մի գրող, Ազգու ճշմարտութիւն, հաստատուած դարաւոր դէպքերով, Բայց անհերքելի է և այն, թէ կան ազգեր, որոնք զանազան փոփոխականութիւնից, թէպէտ և ենթարկուեցին իրանց հայրենի սահմաններում օտար ու բռնակալ իշխանութեան լուծին՝ ի վերայ այս ամենայնի ամբողջ դարերի տեղականութեանց մէջ պահպանումն ո՛չ միայն անունը, այլ և իրանց բարոյական գոյութիւնը, լեզուն և հաւատը, և իղձ՝ կենդանանալու նախնական գոյութեամբ, Այս ազգերի դասակարգում Հայերը նշանաւոր աստիճան են զբաւում, Չնայելով Ասիայի, երեք հազար տարուց աւելի, փոթորկալից մակընթացութիւնով, Հայաստանի վերայ ներգործող յուզմունքների վերայ, Հայերը լիովին հայեր մնացին, նրանց բարբառի վսեմութիւնը, համապատասխան գերազանց մտքերին, զանազանվումէ բոլոր արեւելեան լեզուներից առանձին իմն ազգութեամբ և գիտութեանց և արուեստից անուանակոչութեամբ^(*), Լնարագործ մտք շարժողութեան մէջ դնելով վաճառականութիւնը Ասիայի զանազան եղերաց մէջ, նոքա Լընդկաստանում անգամ յարգանք են աղչում դէպի աւետամբ քարոզեալ կրօնը.

Դիտելով աշխարհագրական քարտէսների վերայ երկրների սահմանները, մենք չըզէտք է զարմանանք նրանց ընդարձակութեամբ, որովհետև ներքինը և ոչ արտաքինը կայացնումէ տէրութիւնների ոյժը, Լուսկ յետոյ, ո՛րպէս շատ անգամ արտաքին մեծութիւնը փոխվումէ գերեզմանական փոշու, « Աւելի երկրներում, ասումէ Հիւսիս-արեւել, ծանրաբեռնուած բռնկութեամբ, ոչ սակաւ և ամենածաղկած երկիրները անմոռնչ անապատների

(*) Անկէտիլ, մասն 2, եր. 375.

են փոխվում, ամայացնող նուաճումներից և մարդկային աշխատանքի ընդարմացումից, Այնտեղ մինչև անգամ ամենավերհամարձ մտքերը, կորստական քաղաքական ուղղություններ, որ ժողով է ներկա և ոչ տարածել բարոյական դժ, խոտորվում են խորհող ուժից ասպարիսից *)» և այլն չեն թարկուեցին անմահ Հիպոկրատի կանոնին, Ի միևնույն մարդկություն, նորա ասպարիսին թե մահող դժը, թե բարոյական քոյություն ինքնագոյությունը առաւել երկար կեանք են ունենում նուաճողների կարողությունից ու տէրությունների՝—իրանց սահմանների այնքան յաճախ փոփոխությունաց ենթարկուող՝—արտաքին ընդարձակությունից, Այն ազգը չէ արտաքսուած ինքնուրոյն ազգերից, որը, մարդկությունը վերապահուած նպատակից չըխոտորուելով, յաւերժացրեց իրան պատմական կեանքին, Այս ինքնագոյ բարոյական գոյություն յատկութիւնը Հայերին է պատկանում, Հաստատում եմ իմ խօսքերը, ապացոյցներով հեղինակին գրոյս, Էջ 11-է-ին վերջերէս հարցախոսքն ինչպէս էր. «Մինչև անգամ հեթանոսութեան խաւարի մէջ ասումէ նա և ամենահեռաւոր դարերում, Հայաստանը, պատմական տարեգրությունները համաժամութեւ սրբազան առարկաների հետ, նորանց տաճարների պատերի մէջ, բաղիններն ու տարեգրությունները քուրմերի վերահայեցողութեան ներքոյ էին գտնվում, Քրիստոնէական հաւատը չըշիջեցրեց Հայերի մէջ տոհմական կեանքով կենցաղավարիլը, նորա գրոշակի տակ Հայերը պերճացան հոշակաւոր գրողներով՝ մատենագրութեան բոլոր տեսակների մէջ, իսկ նոցա պատմաբանները աշխարհ հանեցին բազմաթիւ տարեգրություններ, պահպանուած տաճարներում, Արաբիի գանձերին պէտքէ տիրապետելիս լինէր երկիրը — սպասաւորող որպէս ապաստանարան գիտություններին՝ ճշման բազուկից հողածուածներին՝ ընդհանուր հալածանաց ժամանակներում, Այլ ոչ սակաւ նախապաշարումն, կամ անհոգութիւնը ծածկումն մեզանից թանկագին յիշատակարաններ, Այսպիսի վիճակին ենթարկուեցաւ Հայաստանի պատմութիւնը, թեպէտ նա անձկագոյնս միացած է և ուրիշ արեւելեան ազգերի պատմութեան հետ և Ասիական ընդարձակ տէրութեանց վիճակի հետ, Բայց ով ծանօթացել է Փարիզեան գրադարանում Հայկական ձեռագրների հետ, նա գիտէ թէ որպիսի լոյս են սփում նորա Ասիայի քաղաքական և զինուորական դէպքերի վերայ, և որպիսի շքով լուսաւորումն ժամանակարանութիւնը (chronologie), աշխարհագրութիւնը, տէրութեանց այլալուծն, քաղաքական և աստուածաշտական սահմանագրութիւնները բոլոր հին ազգերի՝ Ասսպից ծովից **) սկսած մինչև Պարսից ծոցը:

Պէտք է գարմանալ, շարունակումէ վերոյիշեալ գրքի հեղինակը, որ Հայկական մատենագրութիւնը տարրերվումէ հին պատմութեամբ, տարածութեան բոլոր մնացեալներից՝ գերազանցուող ճշգրութեամբ, ճշմարտա-

(*) Մատենքերին, մասն 3. եր. 20.

(**) Ի հետումն, առ մեզ, «Վրկանայ» վերաձոյնեալ,

նմանութեամբ, ժամանակաց, տեղեաց և սովորութեանց ձևակերպութեամբ, Պէտք է այս մասին զարմանալ. որովհետև Հայաստանը միշտ կապակցութեան մէջ էր կամ վաճառականութեամբ, կամ քարոյական յարարերութեամբ, Ասորեստանցոց, Մեդաց, Բարեւացոց, Պարսից, Պարթևաց*), Ահիւթացոց և ուրիշ արեւելեան ազգաց հետ, նա միշտ ունէր կամ ուղղակի կամ անուղղակի աղղկեցութիւն բոլոր մեծ դէպքերի վերայ, որոնք տեղի էին ունենում քաղաքական, զինուորական ասպարիդի վերայ և հաւատոյ ասպարիդի վերայ, Միմիայն Հայերն են հաղորդում պարզ հասկացողութիւն Լիւգացոց, Փրիւգացոց Պապատովկացոց, Սիլիկեցոց և ուրիշ վաղնջական Պովկասի և Սև ծովի ափանց բնակչաց վարուց և լեզուի մասին, Մենք չենք գտնիլ ո՛չ մի քրիստոնեայ ազգ, Ասիայի ամենաարեւմտեան մասից մինչև Սև ծովը, որոց մէջ, յընթացս մի քանի դարուց, երևան գային հեղինակներ ընդհակառակն նոքա կորուսին մինչև անգամ իրանց ծագման հետքը, Հարցրէք Ասորուն, Քաղդէացուն, Մեդացուն և ուրիշ շատ ցեղերին, հարցրէք, ի՞նչ է յայտնի նրանց իրանց նախնիքների մասին, նոքա այդ մասին ո՛չ աւելի գիտեն՝ քան՝ որ և է նոր աշխարհի, նորումն անտառների խորքից դուրս եկած, վայրենի ժողովուրդից, Լեզուի փոփոխութիւնը, այս ամենադժուար և ամենահին փոփոխութիւնը, թաղուած է նրանց համար վաղանցուկ ժամանակաց մատախուղի մէջ:

ԱՐՐԻՆՆ.

Թարգմ. Սարգսեանց:

(*) Պարթեական ազգի ծագման մասին — « Պատկերք դիւցազանց եւ արանց մեծաց հնութեան » — մի դազդիական, կարի նշանաւոր երկասիրութիւնից մենք հանում ենք թարգմանութիւն հետեւեալ տողերը, ի բաւականութիւն բանասիրացն, — « Պարթեքը Ահիւթացից են ծագել (scythie), նոքա եկան հաստատուեցան Ասիայի մի մեծ նահանգի մէջ, որին նոքա Պարթեական անուն տուեցին: (Այսօրուայ արեւմտեան խորասանի եւ Իրակ — Աճեմի — l'Irac — Agemi ամենամեծ մասն է) բացի այս դաւառից Պարթեական տանը պարունակումէր իւր մէջ Հիւրկանը — (Hircane) եւ Մարգաստանը, (Marcastan) — (Բիւան — (Le Chilan) — եւ Մազանդարան — (le Mazanderan), Այս բոլոր նահանգները հին Պարսից պետութեան մասերն էին, որ Մեծն Աղէքսանդրը կործանեց Քրիստոսից 330 տարի առաջ, Մերձ 80 թուականին, Պարթեաները լծընկէց եղան այս աշխարհական յաջորդներից Արշակի (Arsace), առաջնորդութեամբ, որը հիմնեց Պարթեաց պետութիւնը, որ տեւեց մօտ 480 տարի, մինչեւ Արտաւանը, (Artaban) որին Արտաշէս (Artaxerxes) Պարսիկը սպանեց, Այս վերջինը, դահի տէր եղած, ջնջեց Պարթեաց անունը, եւ վերստին հաստատեց Պարսից պետութիւնը Որեւելքում, (Images des héros et des grands hommes de l'antiquité.)